«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Ազգային տոների,ծեսերի կազմակեպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Իվետա Անդրեասյան

Մանկապարտեզ՝ «Սիսիան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Բովանդակություն 2

Ներածություն 3

Գլուխ առաջին

Ազգային տոների,ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում 4

Գլուխ երկրորդ

Ինչ դեր են խաղում տոներն ու ծեսերը երեխաների կյանքում 6

Ցերեկույթ՝«Զատիկ» -պլան կոնսպեկտ ավագ խումբ 7

Դիտորդների վերլուծություն 8

Եզրակացություն 9

Գրականության ցանկ 10

Ներածություն

Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում:

Ժողովրդական տոնի ժամանակ ոչ թե պետք է ելույթ ունենան խմբերը, այլ տոնի բոլոր մասնակիցները պետք է ընդգրկվեն երգ ու պարի կատարման մեջ:Տարեներ շարունակ ազգային ծեսերը վերականգնվում և իրականացվում են:

Նախակրթարանում ծիսական և տոնական միջավայրը ստեղծում են մեծերը:

Ազգային ծեսերը, տոնական խաղերը արդյունավետ են մանկան զարգացման գործում:

Արթուր Շահնազարյանը ասել է.

-Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին և թե ինչ կլսի և կտեսնի կախված է մեզանից:Երեխայի բաց աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությունն է և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին, թևավորում նրա երևակայությունը, ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը-ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույները ,այսինքն նյութի թե' ընտրության և թե' մատուցման ձևը պիտի լինի հնարավորին չափ միակը, լավագույնը:

Հայոց տոնածիսական համակարգում պատվավոր տաղավարային տոն է Զատիկի տոնը, որը շարժական տոն է և այն նշում է ողջ հայությունը:

Զատիկ բառը հայոց կենցաղում ունի նաև «տոն» կամ «ուրախություն» իմաստը:Զատիկի տարածվածության գլխավոր պատճառներից մեն այն է, որ այդ տոնը մասնակիցներին հնարավորություն է ընձեռնում առավել շփվելու միմյանց հետ:

Գլուխ առաջին

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Ազգային ծեսերի, տոների խաղարկման մեջ սաները հիմնականում կարող են ընդգրկվել իրենց տարիքին համապատասխան գործողություններ կատարելով:

Յուրաքանչյուր ծեսի, տոնի ժամանակ օգտագործվում են տվյալ ծեսին բնորոշ պարագաներ, ինչպես օրինակ ՝Ամանորին՝ ընկույզ, Զատիկին՝ ձու, Համբարձմանը՝ ծաղիկ և այլն:

Նախակրթարանում երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքում իրենց ուրույն տեղն են գրավում տոների և ծեսերի կազմակերպումը:

Այստեղ սաների դաստիարակության հիմնական ուղին է երեխաներին շարժումները, դեպի ընդհանուր մարդասիրական արժեքները, որոնք բացահայտվում է ազգային մշակույթի, պարերի, երգերի, առածների, ասացվածքների հետ երեխաների հաղորդկացման միջոցով:

Նախակրթարանում անցկացվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ցերեկույթ իր ուրույն հետք է թողնում երեխաների հիշողության և երևակայության վրա, նպաստում անձի ձևավորմանը:

5-6 տարեկան երեխաների կյանքում մեծ իրադարձություն է դպրոց գնալը՝ այսինքն տարեվերջյան հանդեսը:

Յուրաքանչյուր միջոցառում պետք է ունենա իր առանձնահատուկ երանգ ու գրավչությունը:Միջոցառմանը պետ է նախապատրաստվել հանգամանորեն, հաշվի առնելով տեղական պայմանները և հնարավորությունները:

Ծեսերը երեխաների կյանքում դառնում են զվարճանք, ուրախություն:Իսկ յուրաքանչյուր զվարճանք, ծես լուծում է երեխաների կյանքում մի շարք խնդիրներ, որոնք լրացվում են նրանց կյանքի ընթացքում:

Կարևորելով ազգային ծեսերի և տոների կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական հաստատությունները հետազոտական աշխատանքս ընտրել եմ այդ թեման ՝կազմակերպելով «Զատիկ » թեմայով ցերեկույթ :

Այս ցերեկույթի ժամանակ երևաց սաների ստացած գիտելիքները մեր պարապմունքերի ժամանակ, իմացան ինչ է եկեղեցիական տոները , ինչպես են նշում այդ տոներից յուրաքանչյուրը :

«Զատիկ» ցերեկույթի միջոցով ամփոփեցինք ողջ քրիստոնյա ժողովրդի հավատը առ Աստված:

Իմ նպատակն էր, որ երեխաները կարողանան ասել աղոթքը , որը կբժշկի և կմաքրի նրանց հոգիները :

Այսպիսով ցերեկույթները երեխաներին միաբանում են , նրանք տեսնում են գեղեցիկը , ընտրում են լավը, դառնում են հանդուրժող և սիրում են մեկը մյուսին:

Եվ ամենակարևորը դառնում են ինքնավստահ շրջապատում և մեծ միջավայրում :

Գլուխ երկրորդ

Ինչ դեր են խաղում տոներն ու ծեսերը երեխաների կյանքում

1.Ծանոթանում են ազգային ծեսերին ու տոնակատարություններին:

2.Զարգանում է խոսքը , երաժշտական ունակությունները, պարային շարժումներ ՝ սովորում են ազգային պարերը :

3. Տոների հանդեսների ժամանակ կարողանում են ուրախանալ , ուրախացնել ուրիշներին՝ ապահովելով բարձր տրամադրություն :

Տոնակատարության կամ հանդեսի ժամանակ առաջանում է նոր հարաբերություններ ՝ զույգեր կազմելու կարողություն , ընկերասիրություն, միմյանց հետ երգելու և պարելու տրամադություն : Կարողանում են օգնել մեկը մյուսին : Լավ կատարելու իրենց ընձեռնված դերերն ու պատասխանատվությունը հանդեսի ժամանակ ՝ պահպանելով շարքը կամ շրջանը : Երգելով, պարելով , արտասանելով հաջորդաբար , լրացնելով մեկը մյուսին հանդեսին տալիս են միտք և իմաստ : Ցերեկույթը կամ ծեսը դառնում է սանի կյանքում անմոռանալի օր ,որը հիշվում է ամբողջ կյանքի ընթացքում :

Աշխատանք ավագ խմբում

Հանդեսի պլան –կոնսպեկտ

Թեմա- « Զատիկ »

Նպատակ –Իմանալ ազգային տոներից «Զատիկ»-ի մասին : Այն վերածել փոքրիկ ցերեկույթի : Կարողանալ պատմել զատիկի մասին տեղեկություններ : Արտասանել աղոթքը ՝ Հայր մերը : Իմանալ ողջունելու խոսքեր .

-Քրիստոս հայրավ ի մեռելոց :

-Օրհնյալ է հարությունը Քրիստոսի :

Մեզ և ձեզ մեծ ավետիս :

Խթանում -1. Ինչ գիտենք ազգային տոների մասին և որոնք են այդ տոները :

2.Ինչ է Զատիկը

3.Ինչպես և որտեղ ծնվեց Հիսուսը :

Իմաստի ընկալում –Սկսել երգով , հեորթականությամբ պատմեն Հիսուսի ծնունդը ՝ համեմելով երգով ու պարով :

Կշռադատում – Հասկանալ, որ մենք հայերս քրիստոնյա ազգ ենք , որ ամեն տարի անպայման մենք նշում ենք զատիկի տոնը: Եվ այն հայի կյանքում կարևոր ու նշանակալից դեր ունի , որ Զատիկը եկեղեցական կարևոր տոն է :

Անհրաժեշտ պարագաներ – Տոնական հագուստներ, ծլեցրած ցորեն , կլոր գաթաներ, չամչով փլավ և անպայման ներկած ձվեր :

Միջանցքում ունենալ փոքրիկ ցուցահանդես թեմային վերաբերվող աշխատանքներով՝ նկարչություն , ապլիկացիա , ծեփ:

Դիտորդների վերլուծություն

Հանդեսի ավարտից հետո , դիտորդները եկան հետևյալ եզրակացության , որ ազգային տոները շատ կարևոր են նախադպրոցական երեխաների կյանքում : Նրանք դաստիարակվում են հայեցի , սովորում ու պահպանում են քրիստոնյա ավանդույթները :

Դաստիարակի տեսքը տոնական էր , ինչպես նաև երեխաների տեսքը ՝ գեղեցիկ հագ ու կապով ՝ տարազ , տոնական տրամադրությամբ :

Միջավայրը տրամադրող էր ՝տոնին հարմար միջավայր ու սեղան :

Երեխաների տրամադրությունը բարձր էր : Շատ գեղեցիկ առոգանությամբ և հերթականությամբ վեր հանեցին Քրիստոսի հարությունը: Հանդեսի մասնակից էին բոլոր երեխաները ՝ երգերը և պարերը լրացրեցին արտահայտիչ խոսքին :

Իսկ վերջում փլավի և գաթաների համտեսումը , ձվերի կռիվը ամփոփեց հնդեսը:

Եզրակացություն

Այսպիսով՝ ես եկա այն եզրակացության, որ ծեսերի ու տոների կազմակերպումը կրթական օջախներում կրթական զարգացման մի միջոց է: Հասկացել եմ իմ երկարամյա տարիների աշխատանքի արդյունքում , որ այսպիսի ցերեկույթները երեխաների մեջ մեծ աշխուժություն և ոգևորություն է մցնում : Նաև հասկանում են, ինչ է ազգային ծեսը և դրա կարևորությունը : Այն դառնում է կապող միջոց ծնող , երեխա,դաստիարակ հարաբերություններում :

Ես հասել եմ իմ նպատակին և ստացել եմ մեծ բավականություն : Կցանկանայի , որ մեր դաստիարակները իրենց աշխատանքի ընթացքում հաճախ կազմակեպեն նման ցերեկույթներ ,որը ամրապնդում է երեխաների գիտելիքները հայ ազգի և նրա կյանքի մասին:

Գրականության ցանկ

1.Մանկապարտեզի ավագ խմբի (5-6տ.) կրթահամալիր ծրագիր 2007թ.

2.Նյութեր համացանցից

3.Սեփական փորձ